ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 19 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Ռ. Ավագյանի, Հ. Ավետիսյանի, Ա. Ավետիսյանի, Հ. Հակոբջանյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Ռ. Ավագյանը, Հ. Ավետիսյանը, Ա. Ավետիսյանը, Հ. Հակոբջանյանը 04.03.2010թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ, 57-րդ եւ 58-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ դիմողների կողմից պահպանվել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու օրենքով սահմանված ընդունելիության պայմանները, իսկ սույն դիմումն ըստ ձեւի համապատասխանում է օրենքով նախատեսված ընդհանուր պահանջներին, ուստի առկա չեն գործի քննությունը մերժելու օրենքով սահմանված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 69-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացիներ Ռ. Ավագյանի, Հ. Ավետիսյանի, Ա. Ավետիսյանի, Հ. Հակոբջանյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

19 մարտի 2010 թվականի
ՍԴԿՈ/2-10